

1914 Հ 2 16 29

№ 3

Յ Ա Ր Գ Ո Ւ Թ Ա Ր Ա Կ

№ 3

ԿԱՐՄԻՐ ՄԵԽԱԿՆԵՐ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

БИБЛІОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНІЯ
Академії Наук
СССР



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Երես. ապահով չէՊՈԽԱ» Մուզեանի փող. № 8
1914

891.99-82

4-33

№ 3

Ն Ո Ր Գ Ր Ա Գ Ս Ր Ա Ն

№ 3

891.99-82

4-33

ԿԱՐՄԻՐ ՄԵԽԱԿՆԵՐ

(ԺՈՂՈՎԱԾՈՒԻ)

БИБЛІОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Ելեբոր. տպարան «Է Պ Օ Խ Ա», Մուզեյսկի № 8.
1914

ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Վյն ժխորի մէջ, հեղձուկ և անօդ—
Ողջ օրը շոփնդ աղմուկն է խօսում.
Ե՞րգ է թէ բողոք, շանթ է թէ որհտ,
Որ այնպէս խրոխտ շեշտեր է հիւսում...

Այնտեղ մետաղէ առիւծ-դազգահներ
Թաթերը թաղած քարէ հիմքերում,
Սուր ժանիքներով, ինչպէս ազահներ,
Պողպատ թերթերի կողերն են քերում,
Քերում են, կրծում խուլ հողնդիւնով
Երկաթի, թուջէ, պղնձէ սալեր,
Եւ տաշեղի պէս փոռում յատակով
Հաղար մի ճեի խուճուճ-բուլուներ:

Հրդեհ է կարծես այնտեղ դարբնոցում,
Ուր արագ ու վարժ յաղթ բազուկների
Սիլուէթներն են աջ ու ձախ վազում—
Ու մուրը լիզում մույլ պատերի.
Կայծեր են ցայտում գնդակների պէս
Ու խանձում դարբնի մազեր ու երես.
Սալն է տնքում կուանի զարկից,
Երկաթը ճշում հասցրած վէրքից:



56526-66

Սայլերը փոշոտ այնտեղ լայն բակում
երկաթ են կրում—ծանրաքաշ թերթեր.
Հաղար կոկորդ է ճշում, աղմկում,
Որ պատրաստ լինեն երկաթը նետել.
Ուռչում է գէմքի երակների ցանց—
Մինչ սայլից մի թերթ զլորում են ցած...
Ու մի բութ զնդոց... և սուր անկիւնով
Հսկան է արդէն գետնի մէջ ցցւած:

Մի տեղ ճոխնչով մազութ են կրում,
Որ հիւթ, սնունդ տան մեծ կաթսաներին,
Ապա ըիթմայով շարժումի բերում
Արհեստանոցի ողջ երակներին.
Մյլ տեղ գործիքներ մէկ մէկու յեսում,
Որ նորից խոցեն, խայթեն ու հարթեն,
Անիւ-սրոցին շառաչով քսում,
Որ բանւորներին գործիք հայթայթեն:

Եւ ամենուրեք ծով ժխորի մէջ
Ալիքածածան աղմուկն է լսում.
Ե՞րդ է թէ բողոք, կոյն է թէ վէճ,
Որ այնպէս խոնխոտ սրտիցս է խօսում...

Յալոք Յակոբեան

ԱՐԵՒԾ

...Լսում էք, պարոն, կանգնէք մի փոքր, ես կը-պատմեմ բոլորը, սկզբից... գուք գնում էք... լաւ, ես կը պատմեմ ծաղիկներին ու խոտերին...

—Միրուն կակաչներ, գէ լաւ լսեցէք արեկի պատ-մութիւնը:

—Մղջկս հիւսնդ էր. գիտէք, նա էլ ձեզ նման գեղեցիկ մի ծաղիկ էր, սպիտակ-սպիտակ դէմքով, փայլուն ոսկէ մազերով...

Բժիշկը ներքեւ իջաւ մեր բնակարանը, նա տխուր էք... ինչու... հա, յիշում եմ..., նա չէր սիրում ներ-քեի յարկերը... ուզում էր փախչել ներքեւ յարկերից...

Նա իջաւ ներքեւ, նայեց իմ աղջկան, նայեց սե-նեակի պատերին.

—Խոնաւ է, ասաց, պէտք է փոխէք բնակարանը, պէտք է արևով սենեակ ճարէք:

—Քանի երեխայ ունէք, հարցըեց:

—Երեքը ունէինք, մեռան, այս մէկն է մեացել... աղատեցէք իմ աղջկան. նա մեր տան հոգին է...

Նա ինչոր գեղ գրեց և տխուր դէմքով դուրս գնաց:

—Հայրիկ, ինչ գրեց բժիշկը, հարցըեց աղջկաւ:

—Արև գրեց, սիրելիս, արև գրեց, որ քեզ վրայ փայլի և գու լաւանաս...

Ու ես գնացի արև վնարելու, գնացի շմատ հեռու և վերջապէս գտայ արևով բնակարան...

— Սիրելի կակաչներ, դուք, արեի զաւակներ, աւելի լաւ չե՞ր լինի ձեզ մօտ բերէի իմ ոսկեծամիկ աղջրկան... բայց հա, գիտեմ, դուք մեզ հաց չէիք տալ. դուք իմ Լուսիկին հաց չէիք կարող տալ...

— Լսեցէք, ես դեռ չեմ վերջացրել...

Միւս առաւօտ ես Լուսիկին պիտի տանէի արևի տունը, բայց երբ լուսացաւ, նա ինձ կանչեց, ձեռքս բոնեց ու փակեց աչքերը...

Յետոյ եկան մարդիկ և նրան տարան... մենք չէինք թողնում, բայց նրան տարան թողելու...

Եւ երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացաւ մեզանից, մեր տան հոգին էլ նրա հետ գնաց...

Մենք բոլորս այրւեցինք լաց լինելուց, և ես դարձայ արեի հիւանդ...

Ես միշտ գնում էի, նստում նրա գերեզմանի մօտ և սպասում արևածագին: Ու միշտ տեսնում էի իմ Լուսիկին արևը գրկած և իր մազերը նրա վրայ փռած:

Երբ պատմեցի իմ տեսածը մօրս ու կնոջս, նրանք չհաւատացին, նրանք կարծում էին թէ ես խելագարւել եմ և ողբում էին կարմրած, ցամաքած աչքերով:

Բայց մի օր էլ ես բարձրացայ արեի մօտ:

— Հզօր արե, ասացի, մի մեծ զանգատ ունիմ քեզանից. ինչու դու մի շողքդ խնայեցիր իմ աղջկան. ինչու դու սպանեցիր և տարար իմ Լուսիկին:

Նա տիրեց ու մթնեց:

— Գնա, ասաց, գնա յայտնիր տշխարհին, ասա, վերևի յարկը արեի շողքերը խլեց, ստեր ձգեց ներքեի յարկին և սպանեց էն ոսկեհեր աղջկան...

Արազի

ՄՈՒՐԱԾ ՀԱՅԸ ԶԵՇ ՈՒՏԻ

Աշխատառ էի ջահէլ, ոյժը՝ կեանքի հոգեհան, ծխորալի գործարանում թևս տարաւ մեքենան. Քաղց ու հոգսի գրկում սնւած՝ յաղթ բազուկից զրկւեցի, Ու այն օրից անել, զժբաղդ ես հաշմանդամ մնացի:

Չունեմ հօրից—միշտ խեղճ ապրած—ժառանգութիւն ստացած, Ոչ էլ անկիւն՝ պատսպարւեմ սարցաւերից վաստակած, Մի չորդուխ ունիմ միայն այս դառնալի աշխարքում, Միշտ գործելու անմեռ եռանդ, կայծող հոգի անլքում:

Եւ երբ շուտով առողջանամ, հատեն ձեռքս ժրածան, Մարդուն, արդեօք, մի բազուկով շատ շատերը պիտի լողձան. Ա'ւ, այսուհետ բիւր հոգսերից թել-թել տանջւած իմ հոգին, ինչպէս մենակ ու աննեցուկ օրեր մաշի տրտմագին:

Ընկնեմ փողոց շատերի պէս, խեղճութիւնս մարդկանց լամ, Լիգեմ փէշեն ունեորի և գթութիւն ինձ մուրամ,

Դամ անկիւնում մի մարդաշատ ես գութ շարժեմ
վիզ ծռած,
ինչպէս սովոր են շատ թոյլեր՝ դժկամ բախտից հա-
լածւած...

Գործաւորը սակայն սովոր կեանքի կուին, փորձանքին,
կերթայ անվախ ընդդէմ ահեղ դժբախտութեան յոր-
ձանքին,
Եւ ես գիտեմ հպարտօրէն տանել օրը դժբախտի—
Օ՛, սիրել եմ գործն ազնիւ—մուրած հացը չեմ ուտի...

Ես կը գնամ աշխատելու մի հատ ձեռքով կոշտացած,
Ես կը գնամ նորից տոկալ՝ կէսուժ դարձած, վշտացած,
Ինձ մնել է արդար համեստ ամենօրեայ իմ վաստակ,
Անդուլ գործել—այս է եղել իմ կեանքի վեհ նպատակ:

Եւ կաշխատեմ խոլ տանջանքի կրակ-բովում անընդհատ,
Որպէս անյաղթ կեանքի զինւոր միշտ նեղ օրին ան-
վընատ,
Ես ուխտել եմ ատել ընդմիշտ թոյլ ու սարուկ վախ-
Օ՛, երբէք իմ դաժան օրում մուրած հացը չեմ ուտի...
Կոտիարի

Է Տ Ա Պ Ը

«Եւ կայլակներով քրտինք էր ծորում,
Բաց ճականներից, պարանոցներից.
Եւ տապ հողի մէջ ծաղիկ էր ծում
Ամեն մի կաթիլ գետին գլուխող քրտինք գոհարից»:
Յակոր Յակոբեան

— Ետապ են բերում, էտապ — մի քանի անգամ
հասաւ ականջիս...

Սկ, մութ դիշեր էր, ոչ մի աստղ չէր երևում.
Կարծես խաւարը կամեցել էր այդ պահուն իր գերը
լրիւ կատարած լինել...

Ցանկարծ լսւեց առաջնորդող պահակի խստիւ հրա-
մանը և ապա շղթաների շաշեւնը, որը մթութեան մէջ
ինչում էր ինչպէս բողոքի խուլ հեծկլտանք:

Երկաց մի աղօտ լոյս. դա մի լավտեր էր, որ լու-
սաւորում էր այդ ըմբոստների ճանապարհը, — բարի
երթը... գիշերւայ:

Մօտեցող լոյսի ներքոյ յանկարծ նկատեցի մի ծա-
նօթ դէմք...

Ընկերոջս դէմքն էր այդ. նա բոլորովին չէր ընկ-
ձւել. այդ ըոպէին նա գեղեցիկ էր, ինչպէս գարնանային
վերջալոյսը, պսակւած իր վեհ խորհրդաւորութեամբ:

Մեր աչքերը հանդիպեցին իրաբ...

Մի ջերմ օդային համբոյր նետեցի նրան և թւաց,
որ այդ միջոցին նրա պաշտելի, գունատ դէմքը շառա-
գունեց...

ինչ որ արտայայտել կամեցաւ, բայց այդ վայրկեա-
նին պահակը պոռաց.

— «Հե սմէն»...

Թեթև իբարանցում ընկաւ ընկերների մէջ...
Անցաւ էտապը, և քանի հեռանում, այնքան
շղթաների զնգոցը մեղմանում էր և լապտերի լոյսը
խեղդւում խաւարում:

Մնացել էի տեղս կանգնած, քարացած...
Անցան էլի մի քանի ծանը, ցնցող ըռպէներ...
Տարտամ քայլերով դիմեցի դէպի այն կողմը, ուր
տանում էին նրանց...

Ես հետեւում էի, իսկ կապանքների զնգոցը անընդ-
հատ հառաջում էր ականջիս...

— «СТОЙ!», լսւեց պահակապետի խոպոտ ձայնը և
էտապը կանգ առաւ կայարանի դիմաց. մի քանի ըռպէ-
կս... և նրանք աչքիցս չըացան:

Նրանց տեղաւորեցին բանտ - վագոնում:
Մի առ ժամանակ տիրեց տաղտկալի մի սպառ-
դական գրութիւն...

Լսւեց սուլոցի ջղայնացած, յուսահատ ճիշը և ահեղ
դղրդիւնով շարժւեց գնացքը...

— Բարի երթ ձեզ, և բարի վերադարձ, ընկերներ,
հազիւ կարողացայ շշնջալ...

Այսուհետև երկար ժամանակ կանգնած նայում էի
հեռացող զնացքին և զգում, որ շուրջո դատարկւեց...

Ապա սթափւելով քարացած գրութիւնից՝ քայլերս
ուղղեցի դէպի տուն...

Նոր միայն նկատեցի, որ ինձ ուղեկցում էր արեան
մէջ շաղախւած լուսնի մեծ քոլորակը, որ կարծես գետնից
նոր գուրս գալով, սկսել էր բարձրանալ...

ՈՌԱՍԱՆ

ԳԻԾԵՐԸ ՓՈՂՈՑՈՒՄ

Մարել են արդէն աղմուկ ու շարժում,
Նիրհում է յոգնած փողոցը անմարդ.
Բիւրեղ լոյսերի շիթերն են կաթում,
Պատերին ցոլում ոսկի, ադամանդ:

Օղակ շարբերով պերճօրէն կերտած՝
իբար թեկտուել, տներն են խորհում.
Պատուհանները յանքերը կիտած՝
Պատշգամբները կախւել են օդում:

Հեռու անկիւնում սուեր երերուն—
Պահապանն է այն, քայլում է արթուն.
Պահ մի անցորդի ստերի տրոփիւն
Գալիս խոռվում է այս ծով լուսթիւն:

Ցնցւեց գիշերը... իր խուլ սուլոցով
Այն գործարանի շշակն է խաղում.
Գիշերն է սողում անխօս փողոցով—
— Մի անցած կեանքի կայծերն են միում...

Յ. Բէժ— ևան

ասում իմ հայիրը լուսառուած ին՝ չիս աւտումը բնչ կօսիս. թէ քու մամի հոփին կու սիրիս մէ թամաշա արակ... վահ... վահ... շէնի կի ճիրիմէ հառւց ասկ, վուր էտէնց ամին բանում զօչաղ իք...

II ՏԵՍԱՐԱՆԻՑ.

Նոյնք, Բժիշկ եւ Զանգակով.

Բժիշկ.—Վահ, Օսկան Պետրովիչ...

Զանգակով.—Գերասիմ Եակուլիչ, բարով:

Օսկան,—Տօ, էս տուն քանդածնիրը ի՞ն էկան, ախպէր վունց օր տէնում իմ գժողջումը էլ օչով չէ մնացել. Սունդուկնց Գարօյի հիւանդութինը իմացիւ ին ու ամենքը գալիս ին ու գալիս...

Բժիշկ.—Ախպէր, սաղ քաղաքը ման էկանք, ձիւ մէ ճանանչ օքնինի ուստու էկանք. դէն, ասիք տէնում, վունցիք, վունց...

Օսկան.—Թէ ախպիր իս, զուն ջէք կամաց խօսա:

Բժիշկ.—Վահ, ինչ իս վախենում, հէր օխնած. փախստական խօսմ չինք:

Օսկան.—Բաս ինչ զահը ումար ինք. չգան միզ էստիշտին... դէն, ասիք տէնում, վունց էկաք. զուք էլ միզ պէս սատանիքանց խափիւ իք ու զուս ծլկւի, թէ դժուզքն ին էստիտեղափոխի:

Զանգակով.—Դժուզքն ին տեղափոխի, Օսկան, դժուզքը...

Օսկան.—Էտէնց է էրեռում, ախպէր. դժուզքի մարդկանց դիփ էստի իմ տէնում...

III ՏԵՍԱՐԱՆԻՑ.

Փողոցով անցնում են Արուրին Զիմզիմովը եւ Լեպրոնց Փարսիլը.

Արուրին.—Վահ, տէհամը, Փարսիլ ջան, ինչ օյին էկաւ իմ զլիխն էն աղքատ զաղօն, իժում էս քուչումը, էս անցնողդարցողի աղմք... մուլափ տու, Պէպօ. իս քիզ շանց կու տամ. էս արիդէն չիմ տանի. իս չիմ համփերի...

Փարսիլ.—Իժում քիզ նվէ ասում համփէրի. գնա էս նմուտին էվէտ զանգատ արա, մօծմութին կուզիս, հազիր իմ. համա խօսքը միր մէջ մնայ, Պէպօն անմիդ է:

ՈՒՐԱԿԱՆՆԵՐ ԿԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵՆՑ ԳԱԲՈՒ ՏՈՒՆԸ *)

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՑ. Թէմք ներկայացնում է Գաղա-
կինսկի պրոպեկտը, իր հսկայական զինուրիւններով.

I ՏԵՍԱՐԱՆԻՑ.

Օսկան.—Գերասիմ Եակուլիչ, տեհնում ի՞ս, վուց փոխւիլ է ամեն ինչ. էլ միր տէհած քաղաքը, միր տէհած քուչէրը չէ: Գերասիմ.—Վունց էլ միր տէհած խալխն է, Օսկան, քաղ-
կի հիդ մարթիքն էլ փոխւիլ ին. սրանցում էլ վունչ մարթ ու կնիկն է ջոգնուում, վունչ քէսիքն ու հարուստը: Ո՞ւր ին միր թաւադ աղնաւուրնիրը, իրենց օսկէ ու էրծթէ զուքսիրով. մէր ին միր զարաչուխալու կինոսնիրը իրենց լէն շալւրներով ու դարսովի չէքմիքով. (անցնում են վերջին մօդայով հագնած զոյքեր, բեսանցոնկ):

Օսկան.—Այ, նրանց մագիէր ումն ինք տէհնում. թէ քու Աստուձը կու սիրիս մէ թամաշա արա է, կօսիս փուրը հա-
նած սէլուտկա ըլին...

Գերասիմ.—Բաս ինչ վուր տէհիլ ինք էլ չինք տիհնաւ էլի...

Օսկան.—Միր տէհածնիրը, Գերասիմ Եակուլիչ, օրէսի գէնը խալխը թրիատրում, ան մուզէումը կու տէհնի... վահ, էս ինչ սիրուն շինք է, եարաք մէրն է... մուլափ, էնզի ձակ. տումը ինչ վուր բան է գրած. (կարդում է): «Հառոց Թրիատր» վահ, զոչաղ հայէր... Գերասիմ Եակուլիչ, տիհնամւ իս, վուր

*) Մեր յուսատու գրամատուրդ Անուշաւան Վարդանեան, որը իր անդրանիկ «Տգիտութեան զոհեց» գրամայով մամուլի բոլոր հոսանքների ուղարքութեան արժանացաւ, նորես Թիֆլիսի բարբառով զրել է մի պարզէսի մեր ընթերցողներին մի ամփոփ գաղափար տանք բանւոք գրամատուրդի պիհէսի մասին, մենք հեղինակի համաձանութեամբ այդ պիհէսից տալիս ենք մի քանի հատւածներ:

Որպէսզի մեր ընթերցողներին մի ամփոփ գաղափար տանք բանւոք գրամատուրդի պիհէսի մասին, մենք հեղինակի համաձանութեամբ այդ պիհէսից տալիս ենք մի քանի հատւածներ:

Արտօրին. — Վանց թէ անմիղ է, բաս իս իմ մեղաւժը՝
Փարսիդ. — Վհնչ էլ գուն իս մեղաւոր, էտունք զիփ
Սունդուկենց Գարօի մօգոնած բանիրն է, նա է քիզ շառի մէջ
զցողը...

Արտօրին. — Նէտաւի նա ինձ մօտ ինչ դաւի ունէ. միր
քաղկումը ինձ նմաննիրը գանա քիչ կան, վուր ուվիր ուվա-
րէս ին անում. իժում ինչի՞ նրանց բան չի ասում ..

IV ՏԵՍԱՐԱՆԻՑ.

Անցնում են Գիրօ, Հուշան և Կեկիլ. (Դիրօն բոնօյի և քաջում)

Կեկիլ. — Դէգի ջան, իմ սիրտը իմանում էր, վուր Գիրօն
ինձ համա լաւ բան չէ ասելու, ախ, Աստուծ, նետաւի ինձ.
ման տաս... (լաց է լինում):

Շուշան. — Գիրօ, դուն էլ չիս խօսի, ու չիս խօսի, խօ-
սալուց էլ էն հանգի սուս բան կօսիս, որ էրէխիս սիրտը
շուռ կու բերիս:

Կեկիլ. — Զէ, դէգի ջան, Գիրօն դրուստ է ասում, էն ա-
նաստուծը ինձ համա չէր գալի, նրան մեր տուն քաշող բե-
րողը իմ սիրտը, իմ սէրը չէ էլի... նա միր վուլն է ուղեցի,
ինձ վուր ուզեցիլ էր, չիր թողնա ու գնա...»

Գիրօ. — Զառը գնա ու ջնանգամը գնա, էն թաւուր տը-
ղին աղջիկ կի չէ, թոկ չիմ տա վուր խեղդւի, նրա համա
դուք չէր լաց իր ըլմաւմ... գնացիր, գնացիր, վուղի խաթ-
րու աղջիկ սիրող վեսայ դուք չիք ուզի, չէ... Դէ, գնանք,
Սունդուկենց Գարօն խիստ հիւանդ է, կօսէ, նետաւի նա լա-
ւանայ, մնացածը Աստուծ օգորմած է...

Երկրորդ ԳՈՐԾԱՂՈՒԹԵՍՆ մէջ. բեմը ներկայացնում է Սուն-
դուկեանցի տունը, մեծ դարիխ է միջապատոլ կորած. մի
կողմը Սունդուկեանցի հերօսներն են նաւարած. միւս կողմը
ինքը նեղինակը մատճակալի վրայ պատկած քնած է, շրջապատ-
ած իր սիրելի ներս Պէտօի ընտանիքով,

I ՏԵՍԱՐԱՆԻՑ.

Կակուլի. — (Տեսնելով Արտօրին Զիմվիմովին, մօտենում է
նրան): Բարով, աղա Արութին, հը, ինչ խարար է, դուն էս
ուր իս էկի, կլուրը հօ չըգիլեցար:

Արտօրին. — Հարամզագին մտիկ...

Կակուլի. — Աղա Արութին, արա սա քու տեղն է, վուր
էկի իս, դուն գնա էնդի, վուրգի քիզ պէսնիրը կուլին... հը,
իս քու մարթ ասողին...

Արտօրին. — Լպատաճ:

Կակուլի. — Մի խալվաթ տիղ դուն ռաստ արի, լըպստածը
էնդի կու էրևա, էտ ուռած վուրգի վրայ հէտափ դնոլ ածիմ,
վուր ձէնը էստղանց հաշտարիսան գնա... իժում միր Պէպանի
վուրգիրը տիս վունց թաւազա կոնիս...

ՎԵՐՁԻՆ ՏԵՍԱՐԱՆԻՑ.

Գարօ. — (Զարբնում է քնից եւ տեսնելով իրեն սպասող
բազմութիւնը). Պէտօ ջան, էն խալվաթ վուր ինձ է մնում, ինչի՞
վաղ չէիր զարթեցնում. (Պէտօի եւ Կեկիլի ուղեկցութեամբ մըտ-
նում է դահլիմ եւ բազկարուի վրայ նստում): Բարով իր էկի,
իմ աղիկ բարեկամներ, իմացիլ իր վուր հիւանդ իմ էկիլ իր տէ-
սութին, շնորհակալ իմ, շատ շնորհակալ իմ, սիրտս ուզում է
ձիգ հիգ խօսիմ, մասինաթինիր անիմ, ձիր նուր ցաւերէմէն
խարարնիր իմանամ ու էտունը գոի առնիմ, համա տէնում
իմ վուր չիմ կանացի էտէլ թողնումէմ վուր իմ ջէնիլ նընդիր-
նիրը անին. իս գնում իմ... Պէտօ, էտափ անձանանչ օքմիններ
էլ կան, ինչի՞ նրանց մօտ չիս բերում... Էկիր տէնսիմ ավիք,
իմ անձանանձ բարեկամնիր. (բանեարթերը, որ մինչ այդ մի կողմն
իին քաշած, մօ ունում են եւ պատկառանքով զլախ տալի,
իսկ նրանցից մեկը առաջ է զալիս աւ խօսում):

Բանեոր. — Աղոյիւ բարեկամ, մնաք կեանքի խորթ զսւակ-
ներն ենք, տանջանքի ու տառապանքի աշխարհնցն ենք գա-
լիս, ուր կարիքն ու թշւառութիւնն է տիրում և ուր մոռաց-
ւածներն են ապրում... մնաք Պէտօի հարեաններն ենք, եկիլ
ենք Զեղ տեսնելու և երկար կեանք բարեմալթիւն, որ զեղ
երկար ապրէք, մնա էլ ճանաչէք, մնա էլ յիշէք, որ խեղն ու
կրակ Պէտօի շարքում մնա պէս հարիւրաւոր թշւառ ու գըժ-
մաղդ Պէտօններ էլ կան... Զեղ Պէտօն երջանիկ է. նա կամա-
ւոր գերի չէ. նա բնութեան ազատ որդին է, սրա գլխին շա-
րունակ կապոյտ երկինքն է իր վեյլուն աստղերով, իսկ միր
գլխին գործարանի սև, մրոտ առաստաղը իր ահաելի ծխնե-
լոյզով, որտեղից մեր սրտի մուխն է դուրս գալիս. սրա ու-

քերի տակ դուլաշ ջուրն է բըթձալով հոսում, մեր ստքերի տակ շերտաւորւած կեղտը տրորւում. նրա ականջներին գով հովն է շփում, մեղ՝ մեքենաների միապաղաղ աղմուկը խլացնում. նա իր կեանքում մի անզամ տանջւեց, մի անզամ զղաց կեանքի ծանր հարւածը, իսկ մենք շարունակ տնքում ենք այդ հարւածների տակ...

Դաքո.—(զգացրած): Դրուստ իք ասում, իմ անճանանչ ախալտինք. վունց օր տէհնում իմ, էս աշխրքում հալա շատ բան կայ տիհնալու, շատ բան կայ սորվելու... իս մէ Զիմզիմով տէհայ, վուր կինքից գոհ, աշխրքի բար ու նախաթը մայիլում էր. մէ Պէպօ տէհայ, վուր նրա աղաք վիզը ծռած տանջւում էր. Զիմզիմովսերը շատացի ին, Պէպօներն էլ շատ ին, աղ ու ձախ զբնուում ին ու զբնուում... իրանք ծիծաղում ին, ուրիշին լացացնում...

Արոյին. — Գնանք, Փարսիկ ջան, էլ չիմ կանացի համբերի. նրա ասած խօսքերը մախաթի հանդը ծակում է սիրտս...

Անուշաւան վարդանեան



16396

72.001

Հրատարակութիւն սպազմական բանութեաների

ԼՕՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Մաքսիմ Գորկի. Երկու պատմածք X-XI թարգմ.
Յ. Յակոբհանի Գինը 5 կոչ.
- 2) Ա. Բօդլանով. Մարդու և մեքենայի միջև, թարգմ.
Սէ-Դայի, Գինը 5 »
- 3) Կարմիր Մեխակներ. Ժողովածու, Գինը 5 »

БИБЛІОТЕКА
ІНСТИТУТА
ПЕДАГОГІКИ
Відділення
СССР

ԳԻՒՆ Է 5 ԿՈՂԵԿ

Վաճառուում է Թիֆլիսի գրախանութներում,